ւելու. «Ես հիմնարկեցի 'ի 1783 թուի»։ Մի տարի վերջը դարձեալ այս Սրբազանս օրհնած է հիմն Ս. Խաչ վանքին Նախիջևանու, 'ի յիշատակ Ս. Նշան հին և հռչակաւոր վանքին Ղրիմու, հաստատելով անդ տպարան մի։ Յովսէփ Սրբազան՝ մեր Ղրիմեցի գաղթականաց պիտոյքը հոգալէն վերջը, 1791 ին Բեսսարաբիոյ մէջ Գրիգորուպոլիս հայաբնակ քաղաքին ևս հիմունքը օրհնած է, և ազգիս մեծամեծ ծառայութեանց և միանգամայն տէրութեան հաւատարիմ հպատակութեանց 'ի վարձ՝ ստացել է 'ի պետութենէ վեզարին վրայ կրելու ադամանդեայ թանկագին մետրապոլտական խաչ մի և փիլոն (мантіа)։ Այս 1779 ին կը ստանայ Ս. Աննայի առաջին կարգի ասպետական շքանշանը. և տարի անցնելէն վերջը (1800) բովանդակ ազգատոհմովն Ռուսաց իշխանազանց կարգը կ'անցնի, իբրև Նախարար քնեազ։ Չհեռանալով մեր Նպատակէն՝ հարկ է յաւելուլ՝ որ թէպէտ պատերազմական միջոց ժամանակին, յորում Յովսէփ Սրբազան իբրև 'ի պաշտօնէ պաշտպան հանդիսացաւ հայկազանց Ղրիմու և Կովկասու, այլ սոցա վրայ յաւելլով իւր սեփական անձնական ձիրքերն, արթնութիւն մտաց, անխոնջ աշխատութիւն, վայելուչ և միանգամայն պատկառելի տեսիլն արտաքին՝ գրաւած են իշխանազանց ուշադրութիւնը, որով փառաց 'ի փառս յառաջադիմած է, շատ հեռու թողլով իրեն նախանձորդները։

Հայ հոգեորականի համար (չեմ ուզեր Մեսրոպատիպ ճգնազգեաց վարդապետները սոցա թուէն համարիլ) մի բան կը պակասէր Աղղութեանց Սրբազանին, այն է ամբառնալն 'ի գերագոյն